# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
# ԱՆՏԱՌԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԵՎ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ
## ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունները, ի դեմս իրենց Կառավարությունների, այսուհետ՝ Կողմեր,

ղեկավարվելով Տնտեսական միության ստեղծման մասին 1993 թվականի սեպտեմբերի 24-ի Պայմանագրի եւ Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների ձեռնարկությունների եւ ճյուղերի արտադրական կոոպերացիայի զարգացմանն աջակցելու ընդհանուր պայմանների եւ մեխանիզմի մասին 1993 թվականի դեկտեմբերի 23-ի Համաձայնագրի դրույթներով,

մեծ նշանակություն տալով ստեղծված արտադրական եւ գիտատեխնիկական ներուժի, անտառարդյունաբերական համալիրի եւ անտառային տնտեսության մեջ տնտեսական կապերի պահպանմանը եւ զարգացմանը,

ընդունելով բոլոր տեսակի անտառների կայուն զարգացման, շրջակա բնական միջավայրի պահպանման, Համաձայնագրի մասնակից պետությունների բնակչության կենսագործունեության ապահովման նպատակով անտառահումքային պաշարների վերականգնման սկզբունքների իրագործման անհրաժեշտությունը,համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

### ՀՈԴՎԱԾ 1

Կողմերը աշխատանք են տանում անտառարդյունաբերական համալիրի եւ անտառային տնտեսության բնագավառում համագործակցության համակարգման ուղղությամբ եւ նպաստում են նրա զարգացմանը, ընդունում են համաձայնեցված միջոցառումներ անտառաթղթի արտադրանքի եւ անտառային այլ մթերքների իրացման շուկաների փոխադարձ ապահովման համար, նպաստում են անտառարդյունաբերական համալիրի եւ անտառային տնտեսության հետագա զարգացմանը, անտառահումքային պաշարների բանական օգտագործման ապահովմանը՝ հաշվի առնելով ձեւավորված արտադրատեխնոլոգիական կապերը դրանց ու ձեռնարկությունների եւ կազմակերպությունների միջեւ:

### ՀՈԴՎԱԾ 2

Կողմերն ապահովում են պետական աջակցություն համատեղ ներդրումային ծրագրերին, ստեղծում են նպաստավոր պայմաններ անտառարդյունաբերական համալիրում
եւ անտառային տնտեսությունում ներդրումների ներգրավման համար, մշակում են համաձայնեցված դիրքորոշում անտառաթղթի արտադրանքի եւ այլ անտառային մթերքների
համաշխարհային շուկայում համատեղ գործողությունների ապահովման ուղղությամբ:

### ՀՈԴՎԱԾ 3

Կողմերն իրականացնում են անտառարդյունաբերական համալիրի եւ անտառային տնտեսության համար սարքավորումների, տեխնոլոգիական գծերի եւ տեխնիկայի մշակման, պատրաստման եւ մատակարարման համատեղ միջոցառումներ:

### ՀՈԴՎԱԾ 4

Կողմերը համակարգում եւ իրականացնում են համատեղ աշխատանքներ գիտական հետազոտությունների, գիտատեխնիկական ապահովման, անտառային մոնիտորինգի,

անտառարդյունաբերական համալիրում եւ անտառային տնտեսությունում տեղեկատվական համակարգերի ձեւավորման, գիտական, ինժեներական եւ բանվորական կադրերի պատրաստման եւ որակավորման բարձրացման բնագավառում:

ՀՈԴՎԱԾ 5

Կողմերը միջոցներ են ձեռնարկում շրջակա բնական միջավայրի պահպանման խնդիրների լուծման համար փոխհամաձայնեցված մոտեցումների մշակման ուղղությամբ, անտառների պահպանման եւ վերականգնման համար, համաշխարհային հանրության պահանջներին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 6

Անտառարդյունաբերական համալիրի եւ անտառային տնտեսության զարգացման ոլորտում համագործակցության համակարգման համար Կողմերը ստեղծում են անտառարդյունաբերական համալիրի եւ անտառային տնտեսության Միջկառավարական խորհուրդ, որը գործում է սույն Համաձայնագրի անբաժանելի մասը հանդիսացող Կանոնադրության հիման վրա:

ՀՈԴՎԱԾ 7

Սույն Համաձայնագրի իրագործումն իրականացվում է ինչպես Կողմերի, այնպես էլ նրանց իրավասու մարմինների կողմից կնքվող երկկողմ եւ բազմակողմ համաձայնագրերի, ինչպես նաեւ Կողմերի ձեռնարկությունների, կազմակերպությունների եւ տնտեսվարող սուբյեկտների կողմից, անկախ դրանց սեփականության ձեւերից եւ գերատեսչական պատկանելությունից, կնքվող պայմանագրերի (կոնտրակտների) հիման վրա:

Համագործակցության կոնկրետ ուղղություններին աջակցություն ցուցաբերելու ձեւերը որոշելիս եւ ընտրելիս՝ Կողմերը ղեկավարվում են փոխադարձ շահերով:

ՀՈԴՎԱԾ 8

Կողմերն իրականացնում են համագործակցություն անտառաթղթի արտադրանքի եւ այլ անտառային մթերքների համար գործող չափանիշների եւ տեխնիկական պայմանների միասնականացման եւ ներդաշնակեցման, համապատասխանության սերտիֆիկատների փոխադարձ ճանաչման, ինչպես նաեւ անտառարդյունաբերական համալիրի եւ անտառային տնտեսության բնագավառում նորմատիվ-իրավական փաստաթղթերի մշակման ուղղությամբ:

ՀՈԴՎԱԾ 9

Սույն Համաձայնագիրը չի շոշափում այլ միջազգային պայմանագրերի դրույթները, որոնց մասնակիցներ են հանդիսանում Կողմերը:

ՀՈԴՎԱԾ 10

Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման եւ կիրառման հետ կապված վիճելի հարցերը լուծվում են շահագրգիռ Կողմերի խորհրդակցությունների եւ բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով վիճելի հարցերը կարգավորելու անհնարինության դեպքում Կողմերը դիմում են Անկախ Պետությունների Համագործակցության Տնտեսական դատարան կամ այլ միջազգային դատարաններ:

ՀՈԴՎԱԾ 11

Կողմերի ընդհանուր համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ եւ լրացումներ, որոնք ձեւակերպվում են առանձին արձանագրություններով:

ՀՈԴՎԱԾ 12

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից, իսկ այն Կողմերի համար, որոնց օրենսդրությունը պահանջում է դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարում՝ համապատասխան փաստաթղթերը
ավանդապահին հանձնելու օրվանից:

ՀՈԴՎԱԾ 13

Սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո 2 ամսվա ընթացքում Կողմերը կանցկացնեն համապատասխան ազգային մարմինների խորհրդակցություն՝ դրա իրագործման
համար առաջնահերթ միջոցառումները որոշելու համար:

ՀՈԴՎԱԾ 14

Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով:

ՀՈԴՎԱԾ 15

Յուրաքանչյուր Կողմ կարող է դուրս գալ սույն Համաձայնագրից՝ դուրս գալուց առնվազն 12 ամիս առաջ այդ մասին գրավոր ծանուցում ուղարկելով ավանդապահին:

ՀՈԴՎԱԾ 16

Սույն Համաձայնագիրը բաց է դրա նպատակները եւ սկզբունքները կիսող այլ պետությունների կողմից դրան միանալու համար՝ այդպիսի միացման մասին փաստաթղթերը ավանդապահին հանձնելու միջոցով:

Կատարված է Մոսկվա քաղաքում 1998 թվականի սեպտեմբերի 11-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության Գործադիր քարտուղարությունում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած յուրաքանչյուր պետությանը կուղարկի դրա հաստատված պատճենը:

Հավելված
Անտառարդյունաբերական համալիրի
եւ անտառային տնտեսության
բնագավառում համագործակցության
մասին 1998 թվականի սեպտեմբերի
11-ի Համաձայնագրին կից

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱՆՏԱՌԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԵՎ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՄԱՍԻՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Անտառարդյունաբերական համալիրի եւ անտառային տնտեսության Միջկառավարական խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) ստեղծվում է անտառարդյունաբերական համալիրի եւ անտառային տնտեսության ոլորտում համագործակցության կարգավորման եւ զարգացման նպատակով՝ անտառարդյունաբերական համալիրի եւ անտառային տնտեսության բնագավառում համագործակցության մասին Համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) շրջանակներում:

1. Խորհուրդն իր գործունեության մեջ ղեկավարվում է Անկախ Պետությունների Համագործակցության Կանոնադրությամբ, Տնտեսական միության ստեղծման մասին Պայմանագրով, Անկախ Պետությունների Համագործակցության պետությունների ղեկավարների Խորհրդի եւ Կառավարությունների ղեկավարների Խորհրդի որոշումներով, Համաձայնագրով ու այլ միջպետական եւ միջկառավարական համաձայնագրերով ու որոշումներով, սույն Կանոնադրությամբ:

2. Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է՝ սերտ համագործակցելով Տնտեսական միության Միջպետական տնտեսական կոմիտեի (այսուհետ՝ ՄՏԿ) եւ Անկախ Պետությունների Համագործակցության այլ մարմինների հետ:

3. Խորհուրդը հանդիսանում է իրավաբանական անձ գտնվելու վայրի պետությունում գրանցվելու պահից, սեփականության կամ օպերատիվ կառավարման իրավունքով ունի առանձնացված գույք, կարող է իր անունից ձեռք բերել եւ իրականացնել գույքային եւ ոչ գույքային իրավունքներ, ստանձնել պարտականություններ, դատարանում լինել հայցվոր եւ պատասխանող:

Խորհուրդն իրավունք ունի հաշիվներ բացել ինչպես իր գտնվելու վայրի պետության, այնպես էլ դրա տարածքից դուրս գտնվող բանկերում՝ գտնվելու վայրի պետության արժույթով կամ արտարժույթով:

Խորհուրդն ունի կնիք, դրոշմ եւ իր անվանումով բլանկներ:

4. Խորհուրդը ձեւավորվում է Համաձայնագրի մասնակից պետությունների համապատասխան նախարարությունների, գերատեսչությունների կամ այլ կազմակերպությունների ղեկավարներից:

Համաձայնագրի յուրաքանչյուր մասնակից պետություն Խորհուրդ է ուղարկում երկու ներկայացուցիչ՝ մեկին անտառարդյունաբերական համալիրի կառավարման ճյուղային մարմնից եւ մյուսին՝ անտառային տնտեսության գծով գերատեսչությունից:

Յուրաքանչյուր ներկայացուցիչ (այսուհետ՝ Խորհրդի անդամ) Խորհրդում ունի մեկ ձայն:

5. Խորհրդի կազմում խորհրդակցական ձայնի իրավունքով մտնում են ՄՏԿ ներկայացուցիչը եւ Անկախ Պետությունների Համագործակցության անտառային ոլորտների աշխատողների արհմիությունների դաշինքի նախագահը:

## 2. ԽՈՐՀՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

6. Խորհրդի հիմնական խնդիրներն ու գործառույթներն են.

6.1. Առաջարկությունների մշակում Համաձայնագրի մասնակից պետությունների անտառաթղթային արտադրանքի եւ անտառի այլ մթերքների շուկայի կայացման եւ զարգացման վերաբերյալ, այդ թվում՝ դրանց ձեռնարկությունների միջեւ փոխշահավետ կոոպերացիոն կապեր ձեւավորելու միջոցով՝ հաշվի առնելով նոր իրավական եւ տնտեսական պայմանները:

6.2. Համաձայնագրի մասնակից պետությունների տարածքներում անտառաթղթային արտադրանքի եւ անտառի այլ մթերքների ներքին շուկայի պաշտպանվածության համաձայնեցված միջոցառումների մշակում:

6.3. Աջակցություն անտառարդյունաբերական համալիրի եւ անտառային տնտեսության ստեղծված գիտաարտադրական ներուժի պահպանմանն ու զարգացմանը:

6.4. Համաձայնագրի շրջանակներում անտառարդյունաբերական համալիրի եւ անտառային տնտեսության տնտեսական եւ գիտատեխնիկական զարգացման համատեղ

ծրագրերի մշակման եւ իրագործման կազմակերպում:
6.5. Համաձայնագրի մասնակից պետությունների անտառարդյունաբերական համալիրի ձեռնարկությունների զարգացման եւ տեղակայման վերաբերյալ առաջարկությունների մշակում:
6.6. Աջակցություն անտառային պաշարների պահպանմանն ու վերականգնմանը, անընդմեջ, անսպառ եւ անտառների բանական օգտագործում ապահովող պայմանների ստեղծում:
6.7. Շրջակա բնական միջավայրի պահպանման եւ համաշխարհային հանրության պահանջներին համապատասխան անտառների պահպանման խնդիրների լուծման փոխհամաձայնեցված մոտեցումների մշակման եւ իրագործման կազմակերպում:
6.8. Աջակցություն Համաձայնագրի մասնակից պետությունների՝ անտառարդյունաբերական համալիր եւ անտառային տնտեսություն ներդրումների եւ վարկերի ներգրավմանը, արտաբյուջետային աղբյուրներից միջոցների ներգրավման մեխանիզմների եւ պայմանների ստեղծման մասին երաշխավորությունների մշակում:
6.9. Գիտահետազոտական եւ փորձարարակոնստրուկտորական մշակումների առաջնային
ուղղությունների որոշում, փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող աշխատանքների նախագծերի, ծրագրերի եւ այլնի ֆինանսավորման կազմակերպում բաժնային հիմունքներով:
6.10. Մասնակցություն անտառաթղթային եւ այլ անտառային արտադրանքի համար գործող չափանիշների եւ տեխնիկական պայմանների, ինչպես նաեւ անտառարդյունաբերական համալիրի եւ անտառային տնտեսության բնագավառում նորմատիվ-մեթոդական փաստաթղթերի միասնականացման աշխատանքներին:
6.11. Տեղեկատվական եւ գովազդային գործունեության կազմակերպում, գիտական, ուսումնական եւ այլ բնույթի պարբերականների թողարկում:
6.12. Աջակցություն կադրերի պատրաստման եւ որակավորման բարձրացման, դպրոցների եւ գործարարության, մարքեթինգի ու մենեջմենթի դասընթացների կազմակերպման, մասնագիտական գիտելիքների եւ կուտակված փորձի տարածման, ցուցահանդեսների, սեմինարների, համաժողովների, գիտաժողովների կազմակերպման ուղղությամբ համակարգված միջոցառումների իրականացմանը:
6.13. ՄՏԿ եւ Անկախ Պետությունների Համագործակցության Կառավարությունների ղեկավարների Խորհրդի կողմից սահմանված այլ խնդիրների կատարում:

## 3. ԽՈՐՀՐԴԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

7. Իր խնդիրների եւ գործառույթների իրականացման համար Խորհուրդն իրավունք ունի.
7.1. Համաձայնագրի մասնակից պետությունների համապատասխան գերատեսչություններից իր խնդիրների լուծման համար հարցումով խնդրել անհրաժեշտ տեղեկատվություն, ինչպես նաեւ Խորհրդի որոշումների կատարման մասին տեղեկատվություն:
7.2. Խորհրդի իրավասությանը վերաբերող նորմատիվ-մեթոդական եւ այլ փաստաթղթերի համաձայնեցում եւ հաստատում:
7.3. Հաստատված կարգով ներկայացնել Խորհրդի կողմից պատրաստված փաստաթղթերի
նախագծեր Անկախ Պետությունների Համագործակցության պետությունների ղեկավարների
Խորհրդի եւ կառավարությունների ղեկավարների Խորհրդի, ՄՏԿ քննարկմանը:
7.4. Ստեղծել Խորհրդի մշտական կամ ժամանակավոր աշխատանքային եւ այլ մարմիններ, ընդունել դրանց մասին կանոնադրություններ, որոշել դրանց գտնվելու վայրը, գործունեության եւ ֆինանսավորման կարգը, հաստատել հաստիքները եւ ծախսերի նախահաշիվները, նշանակել այդ մարմինների ղեկավարներ եւ իրականացնել հսկողություն դրանց գործունեության նկատմամբ:
7.5. Մասնակցել միջպետական նախագծերի եւ ծրագրերի ֆինանսավորման

աղբյուրների որոշմանը:
7.6. Խորհրդի իրավասության մեջ մտնող հարցերով համագործակցել սույն Համաձայնագրի մասնակից չհանդիսացող պետությունների համապատասխան մարմինների,
Համագործակցության այլ միջպետական, միջկառավարական մարմինների եւ միջազգային կազմակերպությունների հետ:
7.7. Մշակել եւ հաստատել իր աշխատակարգը, ինչպես նաեւ դրանում կատարել փոփոխություններ:

## 4. ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՐԳԸ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

8. Խորհրդի աշխատանքը, որպես կանոն, իրականացվում է Համաձայնագրի մասնակից պետություններում նիստերի անցկացումով:
9. Խորհրդի նիստերն անցկացվում են ըստ անհրաժեշտության, սակայն առնվազն տարին երկու անգամ: Խորհրդի արտահերթ նիստ կարող է հրավիրվել Համաձայնագրի յուրաքանչյուր մասնակից պետության նախաձեռնությամբ եւ Խորհրդի անդամների մեծամասնության համաձայնությամբ:
Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է անդամների կեսից ավելին:
10. Խորհուրդը ղեկավարում են նախագահը եւ նախագահի տեղակալը, որոնք ընտրվում են Խորհրդի կողմից, երկու տարով ռոտացիայի կարգով՝ Խորհրդի անդամների թվից:
Խորհրդի նախագահի եւ նախագահի տեղակալի ընտրության մասին որոշումն ընդունվում է Խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:
11. Համաձայնագրի մասնակից պետությունները Խորհրդում կրում են իրենց ներկայացուցիչների աշխատանքի հետ կապված ծախսերը: Խորհրդի նիստերի անցկացման
ծախսերը ֆինանսավորվում են այն պետությունների միջոցներից, որի տարածքում դրանք անցկացվում են, եւ այդ պետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:
12. Խորհրդի գույքի ձեւավորման աղբյուրները՝ դրամական եւ այլ ձեւով, հանդիսանում են.
- կամավոր գույքային մուծումները եւ հանգանակությունները,
- Համագործակցության պետությունների եւ այլ երկրների նպատակային հատկացումները, այդ թվում՝ պետական, առեւտրային եւ ոչ առեւտրային կազմակերպությունների եւ հիմնադրամների դրամաշնորհները,
- գտնվելու վայրի պետության օրենսդրությամբ չարգելված այլ մուծումներ:
13. Խորհրդի անդամն իրավունք ունի ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն Խորհրդի գործունեության, ընդունած որոշումների մասին, ինչպես նաեւ քննարկման ներկայացնել ցանկացած հարցեր՝ Խորհրդի իրավասության շրջանակներում:
14. Խորհրդի նիստերին, որպես դիտորդներ կամ փորձագետներ, կարող են հրավիրվել Համաձայնագրի մասնակից պետությունների շահագրգիռ նախարարությունների, գերատեսչությունների, պետական եւ հասարակական կազմակերպությունների եւ ձեռնարկությունների, ինչպես նաեւ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:
15. Խորհրդի հերթական նիստի անցկացման վայրը, ժամանակը եւ նախնական օրակարգը որոշվում է Խորհրդի նախորդ նիստում:
16. Խորհրդի որոշումներն ընդունվում են Խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ: Ծրագրերի եւ նախագծերի հաստատման, սույն Կանոնադրության փոփոխության մասին առաջարկությունների, ինչպես նաեւ ֆինանսական հարցերով Խորհրդի աշխատանքային եւ այլ մարմինների ծախսերի նախահաշվի վերաբերյալ Խորհրդի
որոշումներն ընդունվում են Խորհրդի անդամների ձայների երկու երրորդով:
17. Խորհրդի յուրաքանչյուր անդամ կարող է հայտնել այս կամ այն հարցում իր շահագրգռված չլինելու մասին, ինչը չպետք է դիտվի որպես խոչընդոտ որոշում

ընդունելու համար:

18. Խորհրդի աշխատանքային մարմնի գործառույթները կատարում է ՄՏԿ աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումը:

19. Խորհրդի աշխատանքային լեզուն ռուսերենն է:

20. Խորհրդի գտնվելու վայրը՝ Ռուսաստանի Դաշնություն, քաղաք Մոսկվա:

## 5. ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ

21. Խորհուրդը դադարեցնում է իր գործունեությունը Համաձայնագրի մասնակից պետությունների Կառավարությունների ղեկավարների որոշմամբ:

Խորհրդի գործունեության դադարեցման դեպքում ֆինանսական եւ այլ հարցերը որոշում է Համաձայնագրի մասնակից պետությունների կողմից ստեղծվող լուծարող հանձնաժողովը:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2000 թվականի նոյեմբերի 9-ից: